Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

Ք. Երևան, 20 մայիսի 2022 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝
Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Խոջոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Է. Բասենցյան - Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (Խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝
Գ. Ավետիսյան – Տեսչական մարմնի ղեկավար
Գ. Սարոյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Մ. Երիցյան – Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ
Ա. Բաբայան – «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն
Լ. Մինասյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ
Ա. Հակոբյան – Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գլխավոր մասնագետ, վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող

Ողջունելով ներկաներին Խորհրդի նախագահ Վ. Քերոբյանը փաստեց, որ քվորումը ապահովված է: Ներկայացրեց օրակարգը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակի սղության պատճառով օրակարգային բոլոր հարցերը տվյալ նիստում քննարկել հնարավոր չէ առաջարկեց օրակարգի 5-րդ՝

Հանրապետությունում սպանդանոցային մորթի կազմակերպման գործընթացի վերաբերյալ հարցը քննարկել որպես 1-ին հարց:

Ա. Ասոյանն առաջարկեց օրակարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերը կարճ քննարկել և քվեարկել, քանի որ դրանք ժամկետային են: Նախագահն առաջարկեց, այսօրվա նիստում չքննարկվելու դեպքում, օրակարգի 3-4-րդ և 6-7-րդ հարցերը 2022 թվականի մայիսի 23-ին ներկայացնել հեռակա քվեարկության:

Նախագահը ներկայացրեց նոր օրակարգը՝ ըստ հարցերի հերթականությամբ և առաջարկեց քվեարկել:

Օրակարգը հաստատվեց միաձայն՝ 7 կողմ ձայներով:

Հանրապետությունում սպանդանոցային մորթի կազմակերպման գործընթացի վերաբերյալ

(Գ. Ավետիսյան, Ա. Ասոյան, Լ. Նանուշյան, Ա. Խոջոյան, Վ. Քերոբյան)

Նախագահը ներկայացրեց, որ քննարկվելու է հանրապետությունում կենդանիների սպանդանոցային մորթի պարտադիր պահանջի կիրառության խնդիրը:

Գ. Ավետիսյանը շնորհանդեսի տեսքով հանգամանորեն ներկայացրեց հանրապետության ողջ տարածքում՝ ըստ մարզերի, սպանդանոցների տեղաբաշխվածությունը, գործող և պահանջվող սպանդանոցների քանակը, ինչպես նաև խոսվեց շարժական սպանդանոցների մասին:

Ներկայացրեց կառուցված, բայց այս պահին գործունեություն չիրականացնող սպանդանոցների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաև գործունեություն չծավալելու պատճառները:

Գ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ ապանդանոցների գործունեության խոչընդոտում է հանդիսանում նաև դրանց բնակելի տարածքներին մոտ կառուցված լինելու հանգամանքը: Շեշտեց, որ պահանջների համաձայն, որոնք գործում են դեռևս

Խորհրդային Միության ժամանակաշրջանից, սպանդանոցների հեռավորությունը բնակելի տարածքներից 300 մետրից պակաս չի կարող լինել:

Նախագահը խնդրեց պարզաբանել, սահմանված պահանջների փոփոխության հնարավորությունները:

Լ. Նանուշյանը նշեց, որ պահանջները կամային չեն կարող լինել, անհրաժեշտ է հեռավորության կրճատման վերաբերյալ առաջարկվող փոփոխությունը մանրամասն քննարկել՝ մասնավորապես ինֆեկցիոն հիվանդությունների տարածման տեսանկյունից:

Նախագահը նշեց, որ անհրաժեշտ է ընթանալ ժամանակին համահունչ, ինչպես նաև ուսումնասիրել ԱՄՆ-ի կամ զարգացած այլ երկրների փորձը:

Լ. Նանուշյանը հավելեց, որ կարող են ուսումնասիրել միջազգային փորձը:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ սանիտարական նորմերը գործում են, և հիմնավորված է դրանց կիրառման դրական կողմերը՝ նկատի ունենալով սպանդի հետևանքով հնարավոր համաճարակային վիճակի կանխումը:

Ա. Ասոյանը շեշտեց, որ եթե սպանդանոցը նոր տեխնոլոգիայով է գործում, նորմերի վերանայման հարցը կլինի տեղին ու արդիական:

Լ. Նանուշյանը նշեց, եթե Տեսչական մարմինն ունի առաջարկություններ, ապա թող փոխանցի Առողջապահության նախարարությանը, որոնք կուսումնասիրվեն և անհրաժեշտության դեպքում կկատարվեն համապատասխան փոփոխություններ:

Ամփոփելով քննարկումը՝ Խորհուրդը Տեսչական մարմնին հանձնարարեց մեկշաբաթյա ժամկետում Առողջապահության նախարարություն ներկայացնել առաջարկություններ սպանդանոցներին ներկայացվող սանիտարական նորմերի փոփոխության վերաբերյալ:

Քննարկվեցին նաև սպանդանոցների կառուցման մոդելների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ֆինանսավորված ծրագրերի, ծիսական մորթի դեպքերի և մասնագիտացված սպանդանոցների (ճագարների սպանդանոց), սպանդի ենթակա կենդանի կենդանիների տեղափոխման և այլ հարցեր:

Նախագահն առաջարկեց օրակարգային մյուս հարցերը ներկայացնել հեռակա քվեարկության, իսկ 2-րդ՝ նախորդ նիստում տրված հանձնարարականների

կատարման մասին հարցը քննարկել առկա ձևաչափով և հերթական նիստը նշանակել սույն թվականի հունիսի 17-ին՝ ժամը 14:00-ին:

Խորհրդը 7 կողմ ձայներով որոշեց՝ օրակարգի 3-7-րդ հարցերը 2022 թվականի մայիսի 23-ին ներկայացնել հեռակա քվեարկության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

6/23/2022

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124 Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ